

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելի եղբայրներ, ամեն մարդ թող արագ ըլլայ լսելու եւ ծանր խօսելու եւ բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը կը հեռացնէ: (Յակ. 1. 16-20)

Սիրելիներ, ճանչնալէն ետք բարկութեան չարիքները եւ մանաւանդ գիտնալէ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պիտի գրկուինք, երբ Աստուծոյ արդարութենէն բաժնուինք, զգոյշ ըլլանք մեր անձերուն նկատմամբ ու հեռանանք բարկութենէն եւ անոր չարութենէն, ինչպէս կատարի գագանէ մը: Չըլլայ թէ իժի պէս մեր մէջ բոյն ղնելով վնասէ մեր հոգիներուն, խայթէ մեր կրունկը եւ հեծեալը գետին ձգէ: Եթէ Աստուծոյ այլ դատաստանները եւ վրէժխնդրութիւնը բարկացողներուն չէին, գէթ մարդոցմէ պէտք էր շառագունիլ ու դողալ, եւ ոչ թէ գագանի նման անրնտել եւ վայենի՝ բոլոր տեսողներուն ծաղրանքի առարկայ ըլլայ: Օձերու եւ կարիճներու բնութիւնն է միշտ գագանութեան մէջ մնալը, որոնք որու որ մօտենան կը զարնեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառաւ բոլորին ատելի են եւ ամէն ոք իր ձեռքը կը գինէ զանոնք սպաննելու: Անոնց մի նմանիր դուն, որ բանաւոր եւ իմաստուն ես: Անոնք բռնութեամբ ունին գագանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով Արարիչէն, սակայն դուն նոյնպէս չստեղծուեցար, այլ իմաստուն, հեզ եւ հանդարտ: Ինչո՞ւ համար բնութենէդ դուրս գալով կամովին կը նմանիս անոնց գագանութեան: Անոնք իսկ, շատ անգամ մարդոցմէ դիւթուած իրենց բնութենէն դուրս գալով ոչ ոքի կը վնասեն, մինչ քո բարկութիւնդ՝ ոչ աղաչական անոյշ խօսքերը, ոչ բարեկամներու աղերսանքները, ոչ սիրելիներու խրատը, ոչ Աստուծոյ վախը եւ ոչ ալ գեհէնի սպառնալիքը կը մեղմացնեն, այլ որու որ մօտենաս կը զարնես ու կը վիրաւորես:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նկատի ունենալով, որ Մեծ Պահքի ընթացքին Ս. պատարագը փակ վարագոյրի ետեւ կը մատուցուի, Երեքշաբթի գիշերուան Ս. պատարագի մատուցումը պիտի դադրեցնենք Երեքշաբթի, 2 Մարտ 2019-էն սկսեալ:

Ս. պատարագի մատուցումը պիտի վերսկսինք Երեքշաբթի գիշեր, 30 Ապրիլ 2019-ին, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցոյ մէջ:

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» Սրահին մէջ, Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբի կազմակերպութեամբ, տեղի պիտի ունենայ 18-40 տարեկան երիտասարդ երիտասարդուհիներու ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում: Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 22 Յունուար 2019-ին:

Կը հրաւիրենք հայ երիտասարդութիւնը Հայ եկեղեցոյ հովանիին տակ համախմբուելու եւ Աստուծոյ Խօսքով անելու:

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» Սրահին մէջ, տեղի պիտի ունենայ բոլոր տարիքի հայորդիներուն համար, ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում:

Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Արժ. Տ. Ղեւոնդ Քհն. Լօշ-խաճեան: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 5 Մարտ 2019-ին: Կը հրաւիրենք հայ ժողովուրդի գաւազները Աստուծոյ Խօսքով անելու:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԱԲԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ԱՊՐԻԼ 2019

ԹԻՒ 14

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 66.1-24:Կդ. 2.8-3.17:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 22:34-23.39

Չ. Քառասնորդագ: ԳՎԱՍԵՆՏ

Երբ փարիսեցիները լսեցին, թէ Յիսուս Սաղուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնագետ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց. «Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «Սիրէ՛քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ միտքովդ: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդը ասոր նման է. Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէութիւնը»:

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի՞ խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւն որդին է ան»: Անոնք պատասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հոգիով ներշնչուած զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. «Տէրը իմ Տիրոջս ըսաւ. - աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերդ տակ դնեմ՝ որպէս պատուանդան»: «Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուրնէ սկսեալ յետէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ. «Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէ՛ք եւ կատարեցէ՛ք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն, որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ընէր: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց երեսելու համար կ'ընեն: Իրենց գրպանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատույ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այսինքն «Ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք յետէ մէկը «Վարդապետ» մի՛ կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ յետէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոսն է: Չէր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

